

ՄՏԵԻ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒԹԻՒՆ

Պօղոս Առաքեալ կը խօսի փակուած միտ-
քերու մասին (Բ. Կր. 3.14-15), ապականած
միտքերու մասին (Ա. Տիմ. 6.5), բքացած
միտքերու մասին (Բ. Ժտ. 1.9), աշխարհիկ
գիտութիւններով գրաւուող միտքերու մա-
սին (Կղ. 2.8), մարմնականին կառչած միտ-
քերու մասին (Հն. 8.7), խաւարած միտքերու
մասին (Եփ. 4.18):

Նման միտք մը «Աստուծոյ թշնամի է,
որովհետեւ Աստուծոյ օրէնքներուն չի հնա-
զանդիր, ո՛չ ալ կրնայ հնազանդիլ» (Հն.
8.7): Բայց որպէսզի բարեկամ ըլլայ
Աստուծոյ ու կարենայ հնազանդիլ անոր
խօսքին ու կամփին, պէտք է աղօթէ, որ
Աստուած նորոգէ ու նոր մարդ դարձնէ զինք
(Հն. 12.2), լուսաւորէ զինք (Եփ. 1.18), եւ իր
մէջ դրոշմէ իր օրէնքները (Եբր. 8.10, 10.16):
Երբ Աստուած իր Սուրբ Հոգիին ու սուրբ
խօսքին միջոցաւ բանայ ու նորոգէ մեր
միտքերը, այն ատեն միայն զինք պիտի
ճանչնանք ճշմարտապէս (Ա. Յե. 5.20), եւ
այն ատեն միայն անգրաղ միտքով Տիրոջ
հնազանդութեան պիտի նուիրուինք (Ա. Կր.
7.35): Արդարեւ, նորոգուած միտքը
պատրաստ եւ արթուն եղող միտքն է, որ իր
ամբողջ յոյսը կապած կ'ըլլայ փրկութեան
(Ա. Պտ. 1.13): Նորոգուած միտքը Աստուծոյ
կամքը գիտցող ու կատարող միտքն է,
Փրկչին սիրոյն մասին խոկալով հրեւուացող
միտքն է, իր հայեացքը մնայուն կերպով
երկինք սեւեռող միտքն է, ճշմարտութիւնը
սիրող ու ստուքենէն գարշող միտքն է:
Նորոգուած միտքը Աստուծոյ համար
ընդունելի ու կատարեալը ճանչցող եւ լաւն
ու բարին հետապնդող միտքն է (Հն. 12.2):

ԳԻՆԻ



Վերջին Ընթրիքին Յիսուս զինիի
բաժակը վերցուց եւ ըսաւ.- «Բոլորդ
խմեցէք ասիկա, ասիկա իմ արիւնս
է, որով Աստուծոյ հետ նոր ուխտ կը
կնքուի եւ շատերու համար կը թափ-
ւի՝ իրենց մեղքերու թողութեան հա-
մար» (Մտք. 26):

Ուրեմն Ս. Պատարաքի ընթաց-
քին, զինին Քրիստոսի կողմէ նուիր-
ազործուած եւ իր իսկ արեան փո-
խարկեալ այն նիւթն է, որ նշխարհին
կողմէ ներմուծուելով կը դառնայ
մեղսաքաւիչ Հաղորդութիւն, բոլոր
անոնց համար, որոնք խոստովանելէ
ետք, զայն կը ճաշակեն իրենց մեղ-
քերու փրկութեան համար:

Պատարազի Ս. Սեղանին ըն-
ծայտող զինին պէտք է պատրաս-
տուած ըլլայ խաղողէն քամուած
հարազատ հիւթով: Ան պէտք է ըլլայ
անխաղաղախ, անապակ:

Անցեալին, վանքերուն մէջ կը
պատրաստէին Ս. Պատարազի զի-
նին, վատահ ըլլալու համար անոր
հարազատութեան:

Անցեալէն եկող այս աւանդու-
թիւնը... Ծարունակելի



ԺՉ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 2 ՅՈՒՆԻՍ 2023 ԹԻՒ 27

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
ԵՍ. 2.5-11: ՀՁ. 9.30-10.4 ՍՈՒ. 13.24-30

ՏՕՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻ ՏՓՈՅ ԳՏՄԱՆՆ
ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՄԱՏԹՆՈՍԻ 13.24-30

Յիսուս ուրիշ առակ մըն ալ խօսեցաւ անոնց եւ ըսաւ. «Մարդ մը լաւ սերմեր
ցանեց իր արտին մէջ: Գիշեր մը, երբ ամէն մարդ քնացած էր, անոր թշնամին
եկաւ որո՞մ ցանեց ցորենին մէջ եւ զնաց: Երբ սերմերը աճեցան եւ սկսան հասկ
կազմել, այն ատեն որո՞մն ալ երեւցաւ:

Տանտիրոջ ծառաները եկան եւ ըսին անոր. «Տէ՛ր, դուն միայն լաւ սերմեր
չցանեցի՞ր արտիդ մէջ. ուրկէ՞ հապա որո՞մը»:

Ան պատասխանեց. «Ասիկա թշնամիի գործ է»:

Ծառաները ըսին. «Կ'ուզե՞ս, որ երթանք եւ որո՞մը քաղենք»:

«Ո՛չ», պատասխանեց տէրը,- որովհետեւ որո՞մը քաղած ատեն կրնայ ըլլայ,
որ երկուքն ալ միասին արմատախիլ ընէք: Չզեցէք, որ երկուքն ալ միասին աճին
մինչեւ հունձքի ժամանակ: Ես հնձուորներուն կ'ըսեմ, որ նախ որո՞մը քաղեն,
խորձեր կազմեն այրելու համար, եւ ապա քաղեն ցորենը եւ ամբարեւն
շտեմարաններու մէջ»:

Ահաասիկ ճիշդ ասոր կը նմանի երկինքի արքայութիւնը:

ԱՄԵՆԱՍՈՒՐԸ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Հայր Աստուած, Որդի Աստուած, Սուրբ Հոգի Աստուած, երեքը միասին կը
կոչուին Ամենասուրբ Երրորդութիւն: Ներսէս Շնորհալի Հայրապետ, որ այս տարի կը
գուգադիպի իր վախճանման 850-ամեակը կ'ըսէ. «Պէտք է Քրիստոսի երկրպագողները
եւ Ամենասուրբ Երրորդութեան անունով մկրտուածները խոստովանին, թէ Հօր եւ
Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ երեք անձնաւորութիւնները համագոյ են՝ միեւնոյն
գոյութիւնը ունեցող են: Հետեւաբար՝ գատ գատ երեք աստուածներ չեն»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԳԻՏ ՏՓՈՅ Ս.ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻ

Ս. Աստուածածինին նուիրուած տօներու շարքին, յետագային աւելցան նաեւ իր գործածած իրերու նուիրուած տօներ, որոնցմէ մէկն է Ս. Աստուածածինի Տուփի գիւտի տօնը:

Ս. Աստուածածինի Տուփի գիւտը տեղի ունեցած է հետեւեալ ձևով: Երկու իշխաններ ուխտի կը գտնուին Երուսաղեմ: Երբ անոնք կը հասնին Գալիլիա, այնտեղ կը տեսնեն հրեայ կնոջ մը տան առջեւ հաւաքուած բազմութիւն մը՝ բաղկացած ամէն տեսակի հիւանդներէ: Հետաքրքրուելով ներս կը մտնեն եւ կը տեսնեն տուփ մը: Հրեայ կնոջմէ կ'իմանան, որ տուփը ժամանակին կը պատկանէր Ս. Կոյսին: Իշխանները կ'երթան Երուսաղեմ, շինել կու տան նոյն տուփէն օրինակ մը եւ վերադառնալով կնոջ բով, իրենց տուփը կը փոխանցեն անոր եւ Ս. Կոյսին իսկական տուփը կը տանին Պոլիս եւ կը պատմեն պատահածը Պատրիարքին: Պատրիարքը մեծ հանդիսութեամբ տուփը կը գետնդէ եկեղեցւոյ մէջ եւ յատուկ օր կը նշանակէ տօնելու համար Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի տօնը:

Այս տօնը մեր եկեղեցւոյ տօնացոյցին մէջ անցուցած է Սիմէոն կաթողիկոս 1774-ին իր հրատարակած տօնացոյցին մէջ եւ կը տօնակատարուի Յունիս-Յունիս ամիսներու միջեւ:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԾԻՆ

Ամենասուրբ Երրորդութեան մասին խօսելով համագոյ բառը յիշեցինք Ի՞նչ կը նշանակէ ՀԱՄԱԳՈՅ:

Համագոյ կը նշանակէ միեւնոյն գոյութիւն ունեցող. հետեւաբար՝ գատ գատ երեք աստուածներ չեն Հայր, Որդի եւ Ս. Հոգի, այլ Մի (մէկ) Աստուած: Շնորհալին կ'ըսէ. «Մի բնութիւն, մի աստուածութիւն, մի իշխանութիւն, համապատիւ եւ գուգափառ»: Երբ ծնունդ կ'ըսուի, պէտք չէ՛ իմանալ մարդոց ծննդեան սովորական կերպերը, այլ՝ ինչպէս լոյս է լոյս կը ծնի կամ կրակէ կրակ, եւ կամ թէ, քիչ շատ հեռուոր օրինակով մը, մեր միտքէն (ուղեղէն) ծնած խօսք:

Հոգին կը բխի Հօրմէն, փառակից է Որդիին եւ կատարեալ Աստուած է Հօր եւ Որդիի նման:

Հետեւաբար այս բոլորը դժուար է ըմբռնելը ընթերցողին համար: Այո դժուար են մեր միտքերուն համար, բայց հաւատացեալ մարդոց համար դժուար չեն, որովհետեւ հաւատով միայն կ'ըմբռնուին այսպիսի խրթին խնդիրներ: Ներսէս Շնորհալի հայրապետ կ'ըսէ. «Անհասանելի հասկնալու միակ միջոցը ուրիշ բան չէ, բայց եթէ հաւատալ Սուրբ Գիրքին մէջ ըսուածներուն»:

Հետեւաբար մենք, որպէս բրիստոնեաներ անհրաժեշտ է, որ ամենաօրեայ մեր միտքն ու հոգին զօրացնենք Աստուծոյ կեանքով եւ խօսքերով միշտ ընթերցելով Աստուածաշունչը, որ միայն գիրք մը չէ, այլ՝ կեանքի գիրք է:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ԵՐԿՐԱՅԻՆՈՎ ԵՐԿՆԱՅԻՆՆԵՐ ՏԻՐԱՆԱՔ

Աստուած ինքն է աղքատացնողն ու հարստացնողը (Ա.Թգ. 2.7): Աստուծմէ իր առածը ինքնիր անձին համար պահողը՝ ուրիշին իրաւունքն է, որ յափշտակած կ'ըլլայ: Ան, որ իրեն տրուած նիւթական հարստութիւնը կ'օգտագործէ Աստուծոյ փառքին համար՝ արժանի պիտի դառնայ վայելելու երկինքի բազմապիսի գանձերը: Երկրաւոր հարստութեան բաշխումով՝ ժառանգած կ'ըլլանք երկնաւոր հարստութիւնը: Երկինքի գանձը՝ Քրիստոս, իր արքայութեան դուռը լայնօրէն պիտի բանայ մեր առջեւ, եթէ երբեք երկրի վրայ մեր ունեցած գանձերէն բաժին հանենք աղքատին: Երկինքի տէրը կը դառնանք՝ երբ երկիրը չէ մեր տէրը: Կը դառնանք զաւակ Աստուծոյ եւ ընկեր հրեշտակներու երբ կը կարեկցինք աղքատին:

Ա.ՂՕԹԷ

Տէ՛ր, մեղքերուս համար սգացող եւ արտասուող դարձուր զիս, որովհետեւ ծանրաբեռնուած եմ անօրէնութեամբ եւ յագեցած՝ անտեղի խորհուրդով: Շատ ներեցիր ինձի, որովհետեւ չպատժեցիր մարմինի մէջ: Սարսելով կը դողամ, թէ [արդեօք] ինձի համար [աններելի] պիտի չմնա՞ն այսպիսի չարիքները: Կ'աղաչեմ բարեբար Տէր զիս ատեան մի՛ կանչեր եւ մի՛ մատներ զիս տանջանքներու, այլ՝ փրկէ՛ գեհե՛նի հուրէն ու ազատէ՛ վտանգներէն, ողորմէ՛ եւ ազատէ՛ վտանգներէն, ողորմէ՛ եւ ազատէ՛ զիս, որովհետեւ միայն Դո՛ւն մարդասէր ես: Ե. Ասորի

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒՋԵՍ...

Երբ կ'ուզես գիտնալ, թէ Աստուծոյ աչքին ինչ է ճշմարիտ իմաստութիւնը, ԿԱՐԳՎ՝ ՍԱՂՄՈՍ 53

Անմիտ մարդիկ իրենց միտքին մէջ ըսին.- «Աստուած չկայ», ուստի ապականեցան եւ զգուելի մեղքեր գործեցին: Չկայ մէկը, որ բարին գործէ: Աստուած երկինքէն կը նայի մարդոց, տեսնելու համար՝ թէ կա՞յ իմաստուն մարդ մը, որ Աստուծոյ կը դառնայ: Ամէնքն ալ մոլորեցան եւ մոլորեցան գիրկը ինկան, չկայ մէկը որ բարին գործէ, չկայ մէկը, ո՛չ իսկ հոգի: Երբեք խելքի պիտի չգա՞ն անոնք՝ որոնք չարիք կը գործեն, անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուտեն հացի պէս, եւ Աստուծոյ չեն աղօթեր: Բայց յանկարծակի ահ ու դողի պիտի մատնուին, ահ ու դողի մը՝ որուն նմանը չէ եղած երբեք, որովհետեւ Աստուած ցիր ու ցան պիտի ընէ քեզ պաշտպանողներուն ոսկորները, եւ դուն զանոնք ամօթահար պիտի ձգես, որովհետեւ Աստուած մերժեց զանոնք:

Ո՛հ, տեսնէ Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը, որ Սիոնէն պիտի գայ: Երբ Աստուած ետ դարձրնէ գերի տարուած իր ժողովուրդը, Յակոբի սերունդները պիտի ցնձան եւ ուրախանան:

Միշտ սաղմոս կարդանք դիմելով Սաղմոսագիրքին